ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-965-17.03.2016-ԱՄ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՄԱՐԴՈՒ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Մարդու վերարտադրողական առողջության եւ վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի դեկտեմբերի 11-ի ՀՕ-474-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում «Հայաստանում բնակվող» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում բնակվող կամ գտնվող» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 12-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 2-րդ կետը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն իրավունքը՝ փոխնակ մոր միջոցով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու մասով, չի տարածվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող օտարերկրացիների նկատմամբ:»,

2) 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ գտնվող ամուսինները կամ նրանցից առնվազն

մեկը, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող տղամարդը կամ կինը պետք է լինեն ապագա երեխայի կենսաբանական ծնողը:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 15-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Կինը չի կարող հանդես գալ որպես փոխնակ մայր, եթե՝

1) առկա է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված բժշկական հակացուցումներից որեւիցե մեկը, կամ

2) նախկինում առնվազն երկու անգամ հանդես է եկել որպես փոխնակ մայր:»,

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 14-րդ եւ 15-րդ մասերով.

«14. Փոխնակ մորից ծնված երեխան, սույն օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքած վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվող անձին է հանձնվում, եթե ԴՆԹ-ի (դեզօքսիռիբոնուկլեինաթթու) որոշման արդյունքում հաստատվում է, որ

1) ամուսիններից առնվազն մեկը կամ ամուսնության մեջ չգտնվող անձը հանդիսանում են երեխայի կենսաբանական ծնողը եւ

2) փոխնակ մայրը չի հանդիսանում երեխայի կենսաբանական ծնողը:

15. ԴՆԹ որոշման (ներառյալ՝ նմուշառումը) իրականացման կարգը եւ ժամկետները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

ՀՈԴՎԱԾ 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը).	Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը
ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Արա Բաբլոյան	Նախագծի 3-րդ հոդվածով առաջարկվում է «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ. «4. Կինը չի կարող հանդես գալ որպես փոխնակ մայր, եթե՝ 1) առկա է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

	բժշկական հակացուցումներից որևիցե մեկը, 2) նախկինում առնվազն երկու անգամ հանդես է եկել որպես փոխնակ մայր:»: Նման շարադրանքից բխում է, որ թվարկված երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է միայն, որ կինը չի կարող հանդես գալ որպես փոխնակ մայր, մինչդեռ իրականում այս պայմաններից գեթ մեկի առկայությունն էլ բավական է, որպեսզի նրան արգելվի հանդես գալ որպես այդպիսին: Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասը, առաջարկում եմ 15-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում «որևիցե մեկը,» բառերը փոխարինել «որևիցե մեկը, կամ» բառերով:	